

«Նախադասություն» հասկացությամբ ընդգրկվող միավորների բովանդակային ծավալները և ֆունկցիոնալ արժեքը Արաբական լեզվաբանական ավանդույթում

Մարատ Յավրույան  
ԵՊՀ, արաբագիտության ամբիոն

Արաբական լեզվաբանական ավանդույթում լեզվի ստորոգական համակարգը նկարագրելու համար, ըստ էության, օգտագործվում են հիմնականում երկու՝ *al-kalaam* և *al-jumla* հասկացությունները: Ընդ որում *al-kalaam*-ը սահմանվում է որպես «ամբողջական, ինֆնուտուրյն և ավարտուն միտք պարունակող խոսք *al-kalaam*, որը ունի ֆերականական և իմաստային ձևավորվածություն», իսկ *al-jumla*-ն՝ որպես «արտասանված, հոդաբաշխ (*mantuwaq*) լեզվական արտահայտություն, որը մատնացույց է անում միտք, նշանակություն (*al-maʿnaa*) և կարող է հանդիսանալ կամ չհանդիսանալ *al-kalaam*<sup>1</sup>»: Ընդ որում *al-maʿnaa* (իմաստ, բովանդակություն) հասկացությունը իր սահմաններում ներառում է ոչ միայն բառային անվանողական, այլ նաև շարահյուսական-կապակցական իմաստը<sup>2</sup>:

Լեզվաբանական ավանդույթում, երբ խոսքը գնում է *al-kalaam* և *al-jumla* հասկացությունների մասին, նշվում է, որ առաջինը առավել ընդգրկուն հասկացություն է քան երկրորդը, քանզի այն ունի իմաստային և ֆերականական ամբողջական, ավարտուն ձևավորվածություն, մինչդեռ *al-jumla*-ն երբեմն «կարող է իմաստային և ֆերականական ամբողջական, ավարտուն ձևավորվածություն ունենալ, այսինքն *al-kalaam* համարվել, երբեմն էլ կարող է այդպիսին չլինել»<sup>3</sup>: Արաբ ֆերականագետները փաստորեն *al-kalaam* հասկացության համար կարևորում էին երկու հիմնական չափանիշներ՝ «արտասանությունը (արտահայտությունը - *al-sibaara*) և ավարտուն իմաստի հաղորդումը, այսինքն այն, որ երկու (և ավելի) բառերը պարունակում են ստորոգական (հիմնական) կապ, որն ինֆնանպատակ է»<sup>4</sup>: Այնուհետև ֆերականական ավանդույթում ներկայացվում են այն համակարգային բնույթ կրող տարրերը, որոնք անհրաժեշտ են կառույցի «ավարտուն իմաստի» ձևավորման համար (ընդ որում «իմաստ» հասկացության վերոհիշյալ ընկալմամբ), և այն լեզվական միավորների նվազագույն ֆունկցիոնները, որոնց միջև ստորոգական կապ (*al-isnaad*) կարող է գոյություն ունենալ: Այլ կերպ ասած, ներկայացվում են այն հիմնական և նվազագույն բաղադրատարրերը, որոնցից բաղկացած է *al-kalaam*-ը: Արաբական ավանդույթը ենթադրում է ստորոգական կապի (*al-isnaad*) գոյության վեց հնարավոր ձև<sup>5</sup>:

Միջնադարյան արաբական ֆերականական ուսմունքներում *al-jumla* հասկացությունը վերլուծվում է ելնելով երեք հիմնական չափանիշներից, նախ՝ ըստ կառույցի առաջնային դիրքում իրացվող լեզվական միավորի բնույթի, ապա ըստ կազմության և, այնուհետև, ըստ խոսքում ունեցած գործառնության դերի:

Ելնելով վերոհիշյալ առաջնային չափանիշից առանձնացվում են ստորոգական կառույցների հետևյալ չորս տեսակները՝ անվանական կառույց (*at-tarkiyb al-ismiyy*), բայական կառույց (*at-*

*tarkiyb al-fiʕiyy*) պայմանական կառույց (*at-tarkiyb af-ʕartiyy*) և պարագայական կառույց (*at-tarkiyb aḏ-ḏarfiyy*):

Անվանական է համարվում այնպիսի ստորոգական կառույցը, որը սկսվում է *al-musnad ilay-hi* (այսուհետ - (MI) շարահյուսական դիրքով (ստորոգական կառույցի տվյալ կոնկրետ տեսակի համար անվանվում է *al-mubtadaa* չ), այսինքն *al-jumla*-ի առաջին դիրքում անպայման պետք է իրացվի (MI)-ն: Անվանական կառույցի երկրորդ դիրքը անվանվում է *al-musnad* (այսուհետ (M) (կառույցի տվյալ կոնկրետ տեսակի համար՝ *al-xabar*): Փաստորեն, ըստ էության, կառույցը անվանական է գնահատվում հիմնականում այն ոչ պատճառով, որ այն սկսվում է անվանական բառաձևով, այլ այն պատճառով, որ սկսվում է (MI) շարահյուսական դիրքով: Այս կառույցի (MI) դիրքը տարբեր իրացումներ կարող է ունենալ, անգամ՝ ամբողջական *al-jumla*:

Այսպիսով, անվանական կառույցի ձևավորման համար անհրաժեշտ միակ նախապայմանը կառույցի դիրքերի (MI)-(M) տիպի հերթագայությունն ունենալն է:

Խորհրդանշական է, որ արաբական լեզվաբանական ավանդույթում անվանական կառույցները դիտարկվել են հաղորդակցական առումով և անդամատվել (վերլուծվել) թեմայի և ռեմայի, թեև «միանշանակորեն չի կարելի պնդել, որ յուրաքանչյուր անվանական կառույց հաղորդակցական առումով բաժանվում է թեմայի և ռեմայի»<sup>6</sup>: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ ստորոգական կառույցի այս տիպը շունի շարահյուսական դիրքերի ընդարձակման հնարավորություն, նման ցանկացած փորձ դիտարկվում է (M) շարահյուսական դիրքի (*al-xabar*) շրջանակներում գուտ:

Բայական է համարվում այնպիսի ստորոգական կառույցը, որի շարահյուսական առաջին դիրքում իրացվում է (M)-ը, որը այս դեպքում անվանվում է *al-fiʕl*: Փաստորեն, ի տարբերություն անվանական կառույցի, տվյալ դեպքում, համաձայն արաբ միջնադարյան ֆերականագետների, բայական կառույցի ձևավորման հիմնական նախապայմանը կառույցի շարահյուսական դիրքերի (M)-(MI) (վերջինս տվյալ դեպքում անվանվում է *al-faaʕil*) տիպի հերթագայություն (շարադասություն) ունենալն է.ինչպես օր.

(1) *jaaʕa Zayd*  
M MI

Սակայն (M) շարահյուսական դիրքում բացի բայից կարող է իրացվել ցանկացած այլ լեզվական միավոր, որը կարող ճիշտ այնպիսի գործառույթ ունենալ, ինչպիսին ունի բայը (լեզվաբանական ավանդույթում տարանջատվում է լեզվական միավորների այդպիսի գործառույթ ունեցող բավականին ընդարձակ մի խումբ). այսպես օր.

(2) *ḡaarib huwa ʕAmr<sup>an</sup>*  
M MI

Բայական կառույցի (M) շարահյուսական դիրքում ավանդույթում տարանջատվող այդ խմբին պատկանող միավորների հնարավոր իրացումների մասին խոսելով պետք է նշել, որ բավականին

նորմավորված է այդպիսի իրացումների հնարավորությունները ինչպես ձևա-ֆերականական, այնպես էլ գործառնության ին և իմաստաբանական առումներով:

Խոսելով այս տիպի կառույցների մասին, պետք է նշել համակարգային մեկ յուրօրինակության մասին ևս, որը պայմանավորված է կառույցի պրեդիկատի դիրքում (M) սիստեմատիկորեն իրացվող լեզվական միավորի երկակի բնույթով, ձևաշարահյուսական առանձնահատկություններով: Խորհրդածելու տեղիք է տալիս մասնավորապես այն հանգամանքը, որ այն մի կողմից իրենից ներկայացնում է բայահիմք (*al-fiʕl*), որը արաբերենում բայի իմաստա-ձևաբանական կառուցվածքում դեմքի ֆերականական կարգի իրացման բացակայության պայմաններում, կարող է միաժամանակ ընկալվել որպես բայական բառածև և մյուս կողմից էլ՝ այսպիսի ցանկացած միավորի իմաստային կառուցվածքը իր մեջ ներառում է և մատնանշում է նաև սուբյեկտի (MI) կա՛մ «ենթադրելի» (*mustatir*), կա՛մ «բացահայտ» (*baariz*) ստկայությունը: Արդյունքում ստորոգումը տեղի է ունենում հենց այդ բառածևի շրջանակներում և վերջինս կարծես թե ընդգրկում է ոչ թե մեկ, այլ միաժամանակ երկու շարահյուսական դիրքեր՝ և՛ պրեդիկատի (M), և՛ սուբյեկտի (MI), այն դեպքում, երբ անվանական նախադրությամբ նախադասությունները առաջին հայացքից ձևավորվում են ավանդական սխեմայով՝ «երկու բառածև - շարահյուսական երկու դիրք»: Շարահյուսական այս երկու դիրքերի միաձույլ սիստեմատիկ այսպիսի իրացումը պայմանավորում է նաև այն հանգամանքը, որ նույնիսկ այն դեպքերում, երբ (MI)-ին նախորդում մեկ այլ շարահյուսական դիրք, ապա վերջինիս դիրքը անպայմանորեն իրացվելու է այդ իսկ պահին ներմուծվող դերանվանական յուրահատուկ մի կարգով, որը անվանավում է «անդրադարձ դերանուն» (*ḍamiyr ʕaaʕid*): Մշակված է նաև «տրամաբանական» բացատրությունների մի ամբողջական համակարգ նաև այն դեպքերի համար, երբ (MI) դիրքում հնարավոր չէ «գտնել ձևաբանորեն (ֆորմալ) արտահայտված» լեզվական համապատասխան միավոր:<sup>7</sup> Այսպիսով, այն հանգամանքը, որ *al-fiʕl*-ը բայական կառույցի սահմաններում արտահայտում է մշտական և անփոփոխ իմաստ, ապա այն *al-jumla*-ի ձևավորման մասնակի դեպք կարելի է գնահատել իհարկե, *al-faʕil* շարահյուսական դիրքի կոնկրետ իրացման պայմաններում:

Պարագայական է համարվում այնպիսի ստորոգական կառույցը, որը ունի դիրքերի (MI)-(M) տիպի հերթագայություն, սակայն (M) դիրքում պետք է իրացվի կա՛մ *al-jarr wa-l-majruwr* տիպի կապակցություն, կա՛մ էլ պարագայական կապակցություն (*al-murrakab aḏ-ḏarfıyy*): Այստեղ արաբական լեզվաբանական ավանդույթում կարևորվում է այն հանգամանքը, որ կառույցում անպայմանորեն պահպանված են *al-fiʕl* և *al-faʕil*-ը (համենայնդեպս «ենթադրվում է») կառույցում վերջիններիս գոյությունը կա՛մ *istaqarra*, կա՛մ էլ *kaana* բայածևներով), որոնք սակայն փոխարինվում են կա՛մ *al-jarr wa-l-majruwr* տիպի կապակցությամբ, կա՛մ էլ պարագայական կապակցությամբ<sup>8</sup>: Այսպես օր.

- |     |             |   |
|-----|-------------|---|
| (3) | <i>Zayd</i> | <i>fiy d-daar</i>                         |
|     | <i>Zayd</i> | { <i>yakuwnu huwa</i> } <i>fiy d-daar</i> |
|     | <i>Zayd</i> | { <i>kaana huwa</i> } <i>fiy d-daar</i>   |
|     | MI          | M   |

Փաստորեն, պարագայական կառույցները ըստ դիրքերի հերթագայության անվանական տիպի կառույցներ են:

Պայմանական են լեզվաբանական ավանդույթում համարվում այնպիսի ստորոգական կառույցները, որոնք բաղկացած են որպես մեկ կառույց հանդես եկող երկու տարբեր «նախադասություններից» և ունեն հետևյալ կազմությունը. «Եթե... այդ դեպքում...». «*Ճժա... Ճժան...*» ինչպես օր.

(4) *Ճժա Ղanta Ղakramta l-kariyma malakta-hu*

Արաբական լեզվաբանական ավանդույթում առանձնացվում են նաև *al-jumla al-kubraa* (պայմանականորեն կանվանենք *նախադասություն-շրջանակ*), իսկ մյուսը՝ *al-jumla as-suyraa* (պայմանականորեն՝ *նախադասություն-անդամ*) հասկացությունները (ներմուծված Իբն Հիշամի կողմից<sup>9</sup>):

*al-kubraa* է գնահատվում այնպիսի նախադասությունը, որն իր կազմում պարունակում է մեկից ավելի նախադասություն-անդամներ, իսկ նախադասություն-անդամ է համարվում կազմությամբ պարզ նախադասությունը<sup>10</sup>: Այսինքն, նախադասություն-շրջանակը կարող է ըստ էության և կամ անվանական կամ էլ բայական կառույց լինել: Անվանական տիպի կառույց ունենալու դեպքում նախադասություն-շրջանակի (M) (*al-xabar*) դիրքում կարող է իրացվել այլ ինչպես պարագայական, այնպես էլ բայական նախադասություն: Նախադասություն-շրջանակի բայական տիպի կառույց ունենալու դեպքում այն կարող է բաղկացած լինել երկու այլ բայական «նախադասություններից»:

Լեզվաբանական ավանդույթում *al-jumla* հասկացությունը բննարկվել է նաև ստորոգական կառույցում ըստ ունեցած գործառնության դերի: Այսինքն դիտարկվել են այն կոնկրետ դեպքերը, երբ հնարավոր է եղել *al-jumla*-ով փոխարինել (վերջինիս կազմության և՛ իմաստային, և՛ ֆերականական կողմից ելնելով) ստորոգական կառույցի դիրքային որոշակի իրացումներ:

Այսպիսով, արաբական լեզվաբանական ավանդույթում չնայած վերոհիշյալ կառույցներին, «առաջնային» էին համարվում միայն երկու տիպի ստորոգական կառույցներ՝ անվանական և բայական: Պարագայական կառույցը ընդունվում էր որպես անվանական կառույց, իսկ պայմանականը՝ բայական կառույց, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, որ վերջինս բաղկացած է մեկից ավելի *al-jumla*-ներից:

Ստորոգական կառույցների նկարագրման համար արաբական լեզվաբանական ավանդույթում օգտագործվող հիմնական հասկացությունները երեքն են՝ (M), (MI) և *al-fadla* (այսուհետ (F) (պայմանականորեն՝ *լրացում, երկրորդական անդամ*): Արաբական լեզվաբանական ավանդույթում (F) է ընդունվում ստորոգական կառույցի ցանկացած այն անդամը, որը ոչ (M) է և ոչ էլ (MI): Պետք է նշել, արաբական լեզվաբանական ավանդույթում չի ենթադրվում, որ ստորոգական կառույցում (F) բաղադրատարրի անհրաժեշտությունը չի զգացվում, այլ նշվում է, «որ այն չի կազմում է (M)-ը (MI)-ն կապող լեզվական միասնության [նկատի է առնվում ստորագումը – Մ.Յ.] մի հատվածը»<sup>11</sup>:

Արաբական լեզվաբանական ավանդույթի համաձայն, ստորոգական կառույցի բոլոր բաղկացուցիչները պետք է համապատասխան ձևա-ֆերականական ձևավորվածություն ունենան կոնկրետ ֆերականական գործողությունների՝ օրինակ կապերի միջոցով (*al-Zadaawaat*): Անվանական և բայական կառույցների ձևավորման պարագայում դիրքային բաղադրատարրերից (այսինքն (MI)-ն *al-mubtadaa*? և (M)-ը *al-fi*Ն դիրքերում), արաբ միջնադարյան ֆերականագետների կողմից առանձնացվել են նաև «[հաղորդման] սկսման գործոն» (*saamil al-ibtidaa* Դիյա)՝ այսինքն հաղորդման թեմայի գործոն (*al-saamil al-ismiyy*) և «[գործողությունը] կատարողի գործոն» (*saamil al-fa*Նիլիյա)՝ այսինքն հաղորդվող գործողության գործոն (*al-saamil al-fi*Նիլիյ) հասկացությունները<sup>12</sup> (այս դրույթն անմիջականորեն պայմանավորված է լեզվաբանական ավանդույթի հիմնադրույթային հանդիսացող *al-samal*-ի տեսության առանձնահատկություններով):

Այսպիսով, արաբական ստորոգական կառույցների հիմնական բաղադրատարրերը (M)-(MI) են: Նրանց միջև հաստատվում է կառուցվածքային կապ, որն իրացվում է ստորոգման միջոցով, սակայն կառույցը կարող է ունենալ ֆերականական և իմաստային այլ բաղադրատարրեր, այսինքն (F) (լրացումներ, երկրորդական անդամներ)՝ կամ հարցական, կամ ժխտական և այլն մասնիկներ:

Արաբական լեզվաբանական ավանդույթում շափազանց կարևորվում է և համակարգային հիմնաբարային տեղ է զբաղեցնում նաև ներգործություն (*al-samal*), ներգործող բառ, մասնիկ (*al-saamil*)՝ այսինքն կոնկրետ գործոններ, ինչպես օրինակ մասնիկները և ներգործված բառաձև (*al-masmuwl*)՝ այսինքն գործոնի ազդեցությանը ենթարկված, ինչպես օրինակ (երբեմն) բայը կամ (հիմնականում) անունը, հասկացությունները: Վերջին երկու հասկացությունները սերտորեն կապված են միմյան հետ և ավանդույթում միշտ ֆննարկվել են միաժամանակ:

Այսպիսով, լեզվաբանական ավանդույթում ստորոգական կառույցների բաժանումը բայականի և անվանականի ըստ էության պայմանավորված է ոչ թե առաջին դիրքում իրացված լեզվական միավորների բնույթով (բայով կամ անունով) միայն, այլ կառույցի ֆունկցիոնալ միավորների իրացման հերթագայությամբ (շարահյուսությամբ) ու նաև հենց այդ կառույցների տարբեր իմաստաբանությամբ:

Կարելի է ենթադրել, որ արաբական լեզվաբանական ավանդույթում շարահյուսական տեսությունը նպատակաուղղված է արաբերենով ստորոգական կառույցների ձևավորման համար անհրաժեշտ ֆերականորեն ճիշտ որոշակի կաղապարների նկարագրմանը: Հետաքրքիր է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, երբ այս կամ այն պատճառով փոփոխվում է լեզվի կենսական այդ կաղապարներում հաստատականորեն ամրագրված շարահյուսական դիրքերի հերթագայությունը (շարահյուսությունը), ապա անպայամանորեն կառույցում հայտնվում է այդ փոփոխությունը մատնանշող, նշանավորող ձևա-ֆերականական որևէ ցուցիչ (հիմնականում «անդրադարձ դերանուն»), իսկ այն դեպքերում երբ ֆերականական այդ ցուցիչը կառույցում «բացահայտ» չի երևում, ապա ֆերականագետների կողմից ներմուծվում է *at-taqdiyr*-ի (այդ ցուցիչների «ենթադրյալ» առկայության) գաղափարը: Հետաքրքիր է նաև, որ անվանական նախադրությամբ

ստորոգական կառույցը ածանցյալ է համարվում բայական նախադրությամբ ստորոգական կառույցից և այն կարծես թե դիտարկվում է «որպես շեղում» ստորոգական կառույցների ձևավորմանը նպատակառոտ դրված ընդհանուր լեզվական կաղապարներից, այդ իսկ պատճառով էլ Իբն Յախըր մատնանշում էր անվանական նախադրությամբ նախադասության անփոփոխ *al-xabar* շարահյուսական դիրքի հետ մշտապես «ենթադրվող» կամ «թափնված», կամ «արտահայտված» «անդրադարձ դերանվան» պարտադիր առկայության մասին<sup>13</sup>: Այլ կերպ ասած, անվանական նախադասությունը դիտարկվում է որպես բայական ստորոգական կառույցի շարահյուսական դիրքերի վերադասավորման արդյունք, որի *al-faa'il* դիրքը պետք է անպայմանորեն իրացվի՝ թեկուզև «ենթադրյալ» կերպով: «Անդրադարձ դերանվան» կարգը ավանդույթում մտցվում է հիմնականում շարահյուսական դիրքերի ամրագրված հստակ հերթագայության ֆանակային հարաբերությունների պահպանման համար: Այն կոչված է ապահովելու այս կամ այն ախպի կառույցի սահմաններում «շեղված» դիրքերի վերանման հնարավորությունն ու ավանդույթում ընդունված և լեզվում իրապես գործառու կառույցի գծային նորմավորված (ֆորմալ) կազմության ֆանակային համաչափության պահպանման անհրաժեշտությունը:

<sup>1</sup> Տե՛ս. *Mazin al-Waṣī. Naḥw an-nazariyya al-lisaaniyya al-ḥadiyā min xilaala taḥliyl at-taraakiyb al-asaasiyya fiy l-luḡa al-ṣarabiyya*, Dimašq, 1978, էջ 26. Տե՛ս նաև *Ibn Hiḡam. Muḡniy al-labiyb*, Dimašq, 1969, էջ 419. «*al-kalaam*-ը ամբողջական և ավարտուն միտք արտահայտող ասույթ (*al-qawl*) է, այսինքն՝ այն ֆերականորեն և իմաստային ավարտուն ձևավորվածություն, միավոր է», և «*al-jumla*-ն արտահայտություն է կազմված *al-fi'il*-ից և *al-faa'il*-ից, այսինքն՝ *al-jumla*-ն *musnad* և *musnad ilayhi* է»:

<sup>2</sup> Фролов Д.В. О теории личных местоимений в традиционной арабской грамматике. - В кн. Теория и типология местоимений, - М., 1980:

<sup>3</sup> Տե՛ս. *Mazin al-Waṣī*, նշվ. աշխ., էջ 27:

<sup>4</sup> Տե՛ս. *Muḡammad Ḥbraḡm Ḥbaada, al-jumla al-ṣarabiyya. Diraasa luḡawiyya naḡwiyya. al-Iskandariyya*, 1988, էջ 11:

<sup>5</sup> Տե՛ս. նույն տեղում, էջ 12:

<sup>6</sup> Տե՛ս. Саакян А.К. Типы предикации и коммуникативная структура высказывания в литературном арабском языке. Автореф. канд. дисс. - М., 1994, էջեր 7-9:

<sup>7</sup> Տե՛ս. *Ibn Yaṣīf, farḡ al-mufaṣṣal, Bayruwt*, 1970, էջեր 74-79:

<sup>8</sup> Տե՛ս. *Ibn Yaṣīf, farḡ al-mufaṣṣal, Bayruwt*, 1970, էջ 90, «Իմացիր, որ եթե *al-xabar*-ը կամ պարագա (*aḡ-ḡarf*) կամ *al-jarr w-l-majruwr (Zayd fiy d-daar aw Ṣamruw Ṣndaka)* է, ապա իրականում *al-xabar*-ը պարագա չէ... քանի որ պարագան կատարում է *al-xabar*-ի դերը, փոխարինում նրան» ենթադրվում է, որ (*Zayd istaqarra aw ḡadaḡa aw waqafa fiy d-daar*) «հենց սա է *al-xabar*-ը»:

<sup>9</sup> Տե՛ս. *Ibn Hiḡam. Muḡniy al-labiyb, Dimašq*, 1969:

<sup>10</sup> Տե՛ս. *Ibn Hiḡam*, նշվ. աշխ., էջեր 424-425, «Նախադասություն-շրջանակ (*al-jumla al-kubraa*) բաղկացած է անունից՝ որպես *al-mubtadaʿ* և անվանական կամ բայական նախադասությունից՝ որպես *al-xabar*: Այսինքն նախադասություն-շրջանակը կարող է բաղկացած լինել երկու՝ մեկ ոչ ինֆնորույն և մեկ ինֆնորույն նախադասություններից». և «Նախադասություն-անդամ (*aṣ-ṣuḡraa*) է պարզ և ինֆնորույն նախադասությունը, որը երբեմն կարող է լինել բայական, երբեմն էլ պարագայական»:

<sup>11</sup> Տե՛ս. *Mazin al-Waṣī*, նշվ. աշխ., էջեր 40-41:

<sup>12</sup> Տե՛ս. նույն տեղում, էջ 45:

<sup>13</sup> Տե՛ս. *Ibn Yaṣīf, farḡ al-mufaṣṣal, Bayruwt*, 1970, էջ 74: